# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ու Մ

N 105 - Ա

ք.Արտաշատ

12 մայիսի 2026թ.

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1869-Ն որոշումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի Փոքր Վեդի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող և «Քաղաքատեղի Արտաշատ» պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի տարածքում ներառված հանրության գերակա շահ ճանաչված ֆիզիկական անձանց սեփականությունը հանդիսացող հողամասերի նկարագիրը կազմելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ.

- ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների վարչության, հողաշինության բաժնի պետ՝ Ոսկան Միսակյան (խմբի ղեկավար),
- ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների վարչության գլխավոր մասնագետ՝ Վահե Բաղդասարյան,
- ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների վարչության ավագ մասնագետ Գոռ Հովհաննիսյան

Восстановимая подпись

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 Ս. ԹԵՎՈՆՅԱՆ